

Վիկտորիա Գրեթե	10
Եսթեր Յարութիւնեան	3
Վարդուհ Ծածան	1
Կատարինէ Հայրսպետ	5
Մայիլ Մատթէոսեան	3
Սէթիկ Պօղոսեան	10
Օհան Յովհաննէսեան	1
Եղիսէ Կարապետեան	1
Ըննա Տէր Գասպարեան	10
Ստեփաննոս Ղազարեան	2
Ոլտանայ Ղազարեան	1
Խաչատրեան Տէր Բարսեղեան	20
Բէզգաղայ Արարհամեան	3
Մարիամյան Կարապետեան	2
Եղիա Յակովբեան	10
Մնացական Գէորգեան	5
Սարկիս Մ. Յարութիւնեան	20
Նսանջան Մարտիրոսեան	5
Հռիփսիմէ Մկրտչեան	10
Ղուկաս Մկրտումեան	5
Յովհաննէս Ա. Յովհաննէսեան	10
Գրիգոր Տէր Ն. Տէր Յարութիւնեան	5
Վաթիկ Տիւր Ռոստո	10
Գրէլան	15
Արարհամ Տէր Կարապետեան	5
Թադո Տիւր Տէր Կարապետեան	4
Պետրոս Ստեփաննոսեան	3
Մկրտիչ Կ. Մ. Զօհրաբեանց պարգեանց	
մի հաս Քերականութիւն	
Գրիգոր Ս. Թ. Արաքսեանց	5
Յովակիմ Տէր Յովհաննէսեան	2
Մամրէ Արարհամեան	5

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ Ե ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստանի եւ Պարսկաստանի զինակին Հայոց բարեխնամ Առաջնորդ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս Յովհաննէսեան Մայրագոյն Նուիրակն հասնելով ի Կալիֆթա սկսան հետզհետէ կարեւոր տեղեկութիւններ հասուցա-

նել առ մեզ, եւ առ այժմ թէեւ հակիրճ են, բայց դարձեալ հրատարակութեան եւ ուշադրութեան արժանի պարբերութիւնք ունին, զորս կարեւոր կհամարիմք ծաղկաքաղել եւ հրատարակել:

Այս առթիւ հարկ կհամարիմք յաւելուլ, որ յանցելումն Կ. Պօլսոյ մի քանի ազգային լրագրաց մէջ Հնդկաստանի եւ Պարսկաստանի Առաջնորդին նկատմամբ մի քանի անհիմն եւ զրպարտիչ լուրեր հրատարակուած եւ նոյնպիսի զրարանութեանց առթիւ եւս անպատեհ իմն գիտողութիւններ երեւցած էին, որոց հակադէմոս ստոյգ եւ հաւաստի տեղեկութիւններ եւ պատասխաններ ստացանք, եւ ջառք սրտի կյայտենմք, որ ի Նոր—Ձուղայ գտնուող եւ դոյլն ինչքարձր զիրք ունեցող մի եկեղեցականի եւ նորա կուսակից մի քանի անձանց նիւթած դաւադրութեանց արգիւնք եղած են, եւ առ այժմ խնայելով նոցա գլխաւորին եւ ընկերացն պատուոց՝ այս առթիւ անցած զէպքերը, ի Հնդկաստան տրուած հեռագիրը, ըստացուած պատասխանիքը եւ դաւադրաց անունները յիշելը զանցառութեան կրտամք:

Իսկ թէ որ աստիճան կարեւորութիւն ունէր Գրիգորիս Արքեպիսկոպոսի այցելութիւնն ի Հնդկաստան, եւ թէ կարող էր բարի արգիւնք յառաջ բերել՝ ուշագիւր ընթերցողք կարող են Բուշեռցի Մեծ. պարոն Կ. Յ. Չէյթուներեանի գրած մի գրութեան հետեւեալ պատճենէն մի որոշ գաղափար ստանալ: Ահաւասիկ պատճենն, եւ զինի սո-

րա ի յաջորդ թերթս կը հրատարակեմք
Հնդկաստանի նամակէն եղած ծաղկա-
քաղը:

« Լնց+ այցելութեան Դորին Բ. Սըր-
բաղն-Լեան Տէառն Վրէժորիս Լրէպի-
նայսի և Բաբելոնի Լաւրնորի և այս
Պարսկաստանի և Զաքաթաւի ի Բա-
շտաւ: »

Նորին Բարձր Սրբազնութիւնն Տէր
Գրիգորիս Սրբազան Առաջնորդն ըն-
կերակցեալ ընդ բոլոր Հայ հասարակու-
թեան Բուշեռայ, որք ընդ առաջ էին
գնացեալ նմա՝ մուտ եառ ի քաղաք՝
յառաւօտու անդ ի վեցերորդում Զու-
լայի ամսոյ: Գնացեալ նորա ուղղակի
յեկեղեցին սրբոյն Գէորգայ եւ անտի
զինի համառօտ աղօթից չոգաւ նոյնպէս՝
ամենայն ժողովրդովք հանգերձ ի տուն
պարոն Յարութիւնի Մէլքումեան՝ ուր
եւ հրաւիրեալն էր կանխաւ հեռա-
գրով՝ կալնուլ զբնակութիւն յընթացս
այցելութեան իւր:

Այն ինչ ի Բուշեռ մեծապատիւ Հիւ-
պատոք նոցին տէրութեանց Անգղիոյ՝
Հոլանդիոյ՝ Սամանեան եւ Պարսից՝ յա-
տուկ յատուկ այց արարեալ Նորին
Բարձր Սրբազնութեան՝ կարի ընդ նա
հաճեցան: Ոչ պակասեցան եւ անգամ
վաճառականք ականաւորք ի Պարսից
ի յարկ Եպիսկոպոսի մերոյ այցելու-
թեամբք իւրեանց:

Մերազնեայք՝ գոհ եւ բաւարար
յոյժ վասն այն սիրահրաւէր այցելու-
թեան բարեխնամ Թեմակալ Առաջնոր-
դի իւրեանց՝ պատրաստեցան իրահա-
ղոյն ապա Նորին Բարձր Սրբազնութեան

զմեծաշուք եւ զչափաւոր խմն զընդու-
նելութիւն: Սինչ մեծ մասն նոցա յաւ-
ռաւօտու եւ յերեկոյի սեղանակից եւ
ի սպասու էին Սրբազանին: Գուն գոր-
ծէր եղբայրն ընդ եղբօր ցուցանել՝
յայտնել՝ զյարգական սէր եւ զգոհու-
նակութիւն առ Սրբազան այցելուն իւ-
րեանց, եւ միով բանիւ մեծարեալ եղեւ
Նորին Բարձր Սրբազնութիւն կարի յոյժ
թէ ի մերազնեից՝ եւ թէ յայլազգեաց:

Ըստ խնդրանաց ոմանց՝ որք զպատա-
րագելն ի բոլոր կեանս իւրեանց զԵպի-
սկոպոսի չէին տեսեալ՝ Սրբազան Առաջ-
նորդն կատարեաց զԱռ իւր Խորհուրդն
Պատարագի եւ ըստ պատշաճի համա-
ռօտիւ քարոզեաց ժողովրդոց, եւ թէ
յեկեղեցւոյ եւ թէ յարտաքս մշտապէս
առ ջերմեռանդութիւն եւ առ ազգա-
սիրութիւն համողէր զնոսա:

Ուղղէր յատկապէս զբանս իւր՝ առ
մարս խրատելով զնոսա սնուցանել ըզ-
ղաւտիւնս բարիս եւ ջամբել ի նոսա
ընդ կաթին յարս առաքինիս եւ ազ-
գասիրականս, որով լիցին ալիտանի ան-
դամք հասարակութեան Հայոց: ԶԱրդ-
մանեան առեալ զբարբառ ի բերան թէ
« Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեա-
ռնն է: » ի նոյն համողելով խրատէր
զմարս՝ սնուցանել զգաւտիւնս՝ յեր-
կիւղ Տեառն: Գովէր զնոսա վասն պա-
հելոյ զազգայինն ծէս յամենայնի՝ յա-
ւէտ՝ ըստ օրինակի նախնեաց: Զգրա-
գիտութիւն տիկնաց յոյժ եւ յոյժ գո-
վելով՝ քաջալերէր եւս առաւել զար-
դարիլ ուսմամբ եւ զապառնին զըն-
քուշ սեռն եւս նմանապէս ուսումնա-
կանութեամբ զարգացնել յօգուտ Հայ-

րենեաց՝ յօգուտ ազգին եւ յօգուտ
եկեղեցւոյ՝ եւ յերջանկութիւն եւ ի
մխիթարութիւն անական եւ ընկերա-
կան կենաց՝ եւ թէ յեկեղեցւոյ եւ թէ
յարտաքս մշտապէս առ քերական-
դութիւն եւ առ ազգասիրութիւն զնո-
սա համոզէր։ Ասէր փաստիւք հաստա-
տելով՝ զի Մարք՝ եւ Մարք առաքինիք
եւ բարեպաշտք միայն որպէս Նամու-
նէն սուրբ գրոց հաստատուն պահեալ
են եւ պահեն եւ պարտ են պահել
հաստատուն զազգութիւն եւ անասան
զեկեղեցի եւ զկրօն։

Ի զանազան սեղանս՝ ուր հրաւիրե-
ցաւ Նորին Բարձր Արքայնութիւն՝ ա-
մենայն ինչ զազգային զսոնախմբու-
թեան ունէր զտեսիլ։

Նորին Բարձր Արքայնութիւն ի վեշ-
տասաներորդումն նոյն ամսոյ բազում
օրհնութեամբ հրաժարեցաւ ի վոք-
րիկ եւ ի սիրելի հօտէն իւրմէ Բու-
շեռայ՝ եւ ուղեկցեալ յովանց մուտ ի
շոգենաւն՝ յԱսիրիայ քանաւն՝ ելանել
ի Բոսմալի եւ անտի առ ամենայն տե-
ղիս յայցելութիւն հօտից իւրոց սիրե-
լեաց՝ քրք ցիր եւ ցան կան ի Հնդկա-
սան ի Զաւլայ եւ ի Բրմանստան։

Ի 27 Զոհրդ 1875

Մաղկաքաղ Նամակն յաջորդ թեր-
թոյ։

Ի 27 Զոհրդ 1875

Մաղկաքաղ Նամակն յաջորդ թեր-
թոյ։

Ի 27 Զոհրդ 1875

Մաղկաքաղ Նամակն յաջորդ թեր-
թոյ։

ԿԱՏԱՐՈՒՄՆ ԿՏԱԿԻ

ԲՈՒՐՎԱՐԴԵԱՆՅԻ.

ԽճՊԵՐՈՒՄՆ ԱՐԱՐԱՏ ԱՏԱՐԱՏ.

Կտակակատարն Ազգացի Հայազգի Յարութիւնի
Բուրվազեանց Աստրախանցի Հայազգի Արաշամ
Պրիգորեան Փաստեանց գնեալ ի հաշիւ կտակա-
ւանք գումարի վերոյիշեալ Բուրվազովայ ըզ-
քարեայ տուն հանգուցեալ Հայազգւոյ Գալստի
Ասիրեանց Բէշ հաշիւ ըուրեւաւ արծաթոյ՝ և
նորոգեալ զայն նուիրեաց Օրիորդական դպրոցին
Հայոց Աստրախանայ։

Աստի խնդրէ Հոգաբարձութիւնս ի Խմբա-
րութենէդ՝ հրատարակել զսոյն օրինակ ազգօգուտ
գործունէութենէս յիշեալ Արաշամու Փա-
ստեանց յէջս Արարատ Ամաղորդոյ ի գիտութիւն
համազգայնոց։

Հոգաբարձուք. Միսա Բաժ. Միխայիլեանց
Սիմէօն Պօպովեան
Գրիգոր Գալստեան Սողոմոնեանց
Սարգիս Բուրվազեանց.

Ի 4875 թ. 25 Սեպտ.

Մ. Բ. Բ. Բ. Բ.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՒԵՏՐՈՒԹԻՒՆ.

Արժ. Մատթէոս վարդապետ Իզմիր-
լեանց, Բարեկ. Յովհաննէս քահանայ
Մկրեան Կ. Պօլսոյ Պատրիարքական —
Փոխանորդն եւ Բարեկ. Սահակ քահա-
նայ Տ. Սարգսեանց Միջագեղ՝ առա-
ջինն տկանաւորու եւ միւսքն ոսկեղօծ
խաչանշան պարգեւներ ի Վեհ. Հայ-
րապետէ ընդունելոյ արժանացան։

Իզմիրլեանց վարդապետն քաջածա-
նօթ է ի Կ. Պօլիս Ազգային վարչու-
թեան մէջ վարած կարեւոր պաշտօն-
ներով եւ երեսփ. Ժողովում անդամ
լինելով, Մկրեան քահանայն Պարտի-